ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***03.04.2019թ. ժամը 11.00***

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 50-ը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդական Անուշավան Ղազարյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի պետ Արշակ Էլիզբարյանը, «Գեղարքունիք» ջուր օգտագործողների ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սհոյանը, «Պատմամշակութային արգելոց թանգարաններ և պատմական միջավայրի պահպանություն» պետական ոչ առևտրային կազմակերպության պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության պետ Գոռ Գասպարյանը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հիմնադրամի մարզային համակարգող Խորեն Բաղալյանը:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2019 թվականի 1-ին եռամսյակի արդյունքների մասին:
/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2019 թվականին իրականացվող աղբահանության և վարձավճարների հավաքագրման գործընթացների մասին:
/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Ելույթներ ունեցան՝

Կարո Գևորգյան - Ներքին Գետաշեն համայնքի ղեկավար
Արման Ղազարյան - Զոլաքար համայնքի ղեկավար
Հակոբ Ավետյան - Գեղամասար համայնքի ղեկավար
Արմեն Պողոսյան - Գանձակ համայնքի ղեկավար
Գվիդոն Ավետիսյան - Ծակքար համայնքի ղեկավար
Լյովա Աբրահամյան - Սարուխան համայնքի ղեկավար
Հակոբ Գասպարյան - Կարմիրգյուղ համայնքի ղեկավա
Արթուր Սուվարյան - Վաղաշեն համայնքի ղեկավար

Հայտարարություններով հանդես եկան՝

Դավիթ Մանուկյան - 2-րդ բանակային զորամիավորման հրամանատար
Գևորգ Մխեյան - ՀՀ Գեղարքունիքի մարզի զինկոմ
Արշակ Էլիզբարյան - Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի պետ
Գոռ Գասպարյան - «Պատմամշակութային արգելոց թանգարաններ և պատմական միջավայրի պահպանություն» պետական ոչ առևտրային կազմակերպության պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության պետ
Խորեն Բաղալյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հիմնադրամի մարզային համակարգող
Հայկ Սհոյան - «Գեղարքունիք » ՋՕԸ տնօրենի պաշտոնակատար

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2019 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու և սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) ակտիվ աշխատանքներ տանել և կապեր հաստատել արտերկրում կամ հանրապետության տարածքում ապրող գործարարների հետ /ծնունդով համայնքներից/, բանակցություններ վարել նրանց հետ 2019 թվականի մայիսի 11-ին նախատեսվող «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» համաժողովին նրանց մասնակցությունն ապահովելու և համայնքներում ներդրումներ կատարելու համար: Այդ գործարարների կոնտակտային տվյալները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին.

3) պետական մարմիններից ստացված գրություններին ու քաղաքացիներից ստացված դիմումներին պատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում և բացառել դրանց ուշացումով պատասխանելը կամ չպատասխանելը.

4) համայնքներում առկա խնդիրները պետական վերադաս մարմիններին ներկայացնել մարզպետարանի միջոցով.

5) խիստ կարևորելով համայնքների աղբահանությունն, ակտիվ աշխատանքներ տանել ազգաբնակչության հետ աղբահանության վարձավճարները հավաքագրելու և համայնքների աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.

6) համագործակցել «Պատմամշակութային արգելոց թանգարաններ և պատմական միջավայրի պահպանություն» պետական ոչ առևտրային կազմակերպության պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության հետ՝ համայնքների վարչական տարածքներում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և տարածքների աղբահանության աշխատանքներ իրականացնելիս.

7) հետևել, որ համայնքների վարչական տարածքներում գտնվող պատմամշակութային հուշարձանների վերանորոգման կամ վերականգնման աշխատանքներն իրականացվեն ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան.

8) ազգաբնակչությանը տեղեկացնել անասունի առք և վաճառքի ժամանակ անասունի առողջության վերաբերյալ անասնաբույժի տեղեկանքի /Ձև 1/ առկայության պարտադիր պահանջի վերաբերյալ.

9) անասնագլխաքանակի հաշվառումն իրականացնելիս առաջնորդվել փաստացի անասնագլխաքանակի առկայությամբ.

10) ուշադրության կենտրոնում պահել գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը և ժամանակին ավարտումը.

11) ակտիվ աշխատանքներ տանել ազգաբնակչության հետ ՀՀ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի կողմից անցկացվող ուսումնական զորահավաքներին պատշաճ մասնակցություն ցուցաբերելու համար

12) աշխատանքներ տանել համայնքների ջրօգտագործողների հետ՝ կուտակված պարտքերը կարճ ժամկետում մարելու համար.

13) ոռոգման սեզոնին պատշաճ նախապատրաստվելու համար կազմակերպել և իրականացնել համայնքների ոռոգման ջրատարները մաքրելու աշխատանքները:

2. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ /գյուղ Մարտունի/, Հայրավանք, Ծաղկաշեն և Կարմիրգյուղ համայնքների ղեկավարներին՝ կարճ ժամկետում վճարել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հիմնադրամին պատք մնացած գումարները:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ